Արձանագրություն N 2-1

ՀՀԲԿ-ԳՀԽԾՁԲ-21/13 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27.08.2021թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Ար. Գրիգորյան
Հ. Գինովյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Աշ. Գրիգորյան

1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 27.08.2021թ. ժամը 11:00-ին:

գ) Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

դ)Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	<<ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԲԸ	16 857 200	8 215 200	1 643 040	9 858 240
2*	<<ԱՐՈՍԱ>> ՍՊԸ		8 800 000	-	8 800 000
3*	<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ		13 800 000	-	13 800 000
4	<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ		13 325 000	2 665 000	15 990 000
5	<<Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան>> հիմնադրամ		13 416 666.67	2 683 333.33	16 100 000
6	<<Մաստարա>> ԱԿ		13 600 000	3 400 000	17 000 000

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը	ԱԱՀ	Ընդհանուր գին
7*	<<Ղարաքիլիսա>> ՍՊԸ	16 857 200	14 000 000	-	14 000 000
8*	<<ՄԱԼԿ>> ՍՊԸ		14 250 000	-	14 250 000
9*	<<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ		14 333 800	-	14 333 800
10*	<<ԱՍՔՄԵԴիզայն>> ՍՊԸ		14 900 000	-	14 900 000
11	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ		18 000 000	-	18 000 000
12	<<Ինտերէներգիա>> ՍՊԸ		18 200 000	-	18 200 000
13	<<Հազարաշեն>> ՍՊԸ		24 000 000	-	24 000 000
14	<<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ		80 000 000	16 000 000	96 000 000

Մասնակիցները ԱԱՀ վճարող չեն:

1.2 Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Հայտերի գնահատման մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ոչ մի անհամապատասխանություն չի արձանագրվել, բացի <<Մաստարա>> ԱԿ-ի հայտից, որի գնային առաջարկում նշված չէ մասնակցի անվանումը, ինչպես նաև ԱԱՀ-ի արժեքը ճիշտ չէ հաշվարկված: Կազմակերպության կողմից չի պահպանվել <<Ավելացված արժեքի հարկի>> մասին ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափը:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ կերպ՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԲԸ	բավարար
2	<<ԱՐՈՍԱ>> ՍՊԸ	բավարար
3	<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	բավարար
4	<<ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ>> ՍՊԸ	բավարար
5	<<Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան>> հիմնադրամ	բավարար
6	<<Մաստարա>> ԱԿ	անբավարար
7	<<Ղարաքիլիսա>> ՍՊԸ	բավարար

8	<<ՄԱԼԿ>> ՍՊԸ	բավարար
9	<<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ	բավարար
10	<<ԱՍՔՄԵԴիզայն>> ՍՊԸ	բավարար
11	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ	բավարար
12	<<Ինտերէներգիա>> ՍՊԸ	բավարար
13	<<Հազարաշեն>> ՍՊԸ	բավարար
14	<<ԱՐՄՍՏՐՈՅ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Բանակցությունների կազմակերպման և անցկացման կարգի մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հաշվի առնելով, որ «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/13» ծածկագրով գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը, ծանուցել 2.2 կետով ոչ գնային պայմանները **բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին (բացառությամբ <<Մաստարա>> ԱԿ-ին)** առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպվող բանակցությունների մասին, որը տեղի կունենա **2021 թվականի օգոստոսի 31-ին ժամը 15:30-ին** ՀՀ քաղաքաշինության կոմիտեում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի ընդունարանի խորհրդակցությունների սենյակում):

3.2 Բանակցությունների համար ներկա գտնվող մասնակցի նվազագույն գնի ներկայացման նպատակով կտրամադրվի 3 (երեք) րոպե ժամանակ, որի ընթացքում կարող են լինել գնի իջեցումներ և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին նիստին ներկա յուրաքանչյուր մասնակցի կողմից նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով կփոխանցվի գնահատող հանձնաժողովի նախագահին, որը կհամարվի վերջնական: Վերջինիս կողմից դրանք կբարձրաձայնվեն, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կներկայացվեն էլեկտրոնային աղյուսակի տեսքով: Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը կհայտարարվի ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Միրզոյան

Անդամներ՝ _____ Դ. Շատվերյան

_____ Ռ. Եղիազարյան

_____ Ար. Գրիգորյան

_____ Հ. Գինովյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Նիկոլայան